

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՆՍՆԵՐԻ
ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«09» հոկտեմբեր 2019թ. թիվ

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՆՍՆԵՐԻ
ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
2-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի 5-րդ կետը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի՝ «Հիմնադրամի կողմից եռամսյակային հաշվետվությունների հրապարակման կարգը, ձևը սահմանելու վերաբերյալ» որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1. Որոշման 3-րդ կետով սահմանված աղյուսակի 1-ին մասով սահմանված «Հաշվետվություն Հիմնադրամի հատուցումների վերաբերյալ» բառերը փոխարինել «Հաշվետվություն հիմնադրամի կատարած աշխատանքների վերաբերյալ» բառերով:
2. Լրացնել Որոշումը 10-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10. Հիմնադրամի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը պետք է բաղկացած լինի նվազագույնը Հավելված 1-ով սահմանված մասերից և պարունակի յուրաքանչյուր մասի վերաբերյալ հիմնադրամի կատարած աշխատանքի վերաբերյալ տեղեկատվություն՝ եռամսյակային կտրվածքով: Անհրաժեշտության դեպքում հիմնադրամն իրավունք ունի հաշվետվությունը լրացնել հավելյալ մասերով՝ կատարված աշխատանքներն առավել արդյունավետ ներկայացնելու համար:»:

3. Փոփոխել Որոշման Հավելված 1-ը հետևյալ բոցանդակությամբ.

« Հավելված 1

Հաշվետվություն հիմնադրամի կատարած աշխատանքների մասին

Մաս 1. Կատարված հատուցումներ

1. Ըստ հատուցումների քանակի
2. Ըստ զինծառայողի կոչման/աստիճանի, կարգավիճակի և հատուցման գումարի

Մաս 2. Ֆինանսական հիմնական ցուցանիշներ

1. Հատուցումներ
2. Պարտադիր վճարներ
3. Նվիրաբերություններ

Մաս 3. Կատարված նվիրաբերություններ և դրանց հարաբերակցությունը

1. Հարաբերակցություն ըստ նվիրաբերությունների քանակի
2. Հարաբերակցություն ըստ նվիրաբերությունների մեծության
3. Հարաբերակցություն ըստ երկրների

Մաս 4. Դրոշմանիշային վճարների հայտարարագրում և դրանց հարաբերակցությունը

1. Հայաստանի Հանրապետությունից ստացված դրոշմանիշային վճարներ
2. Արցախի Հանրապետությունից ստացված դրոշմանիշային վճարներ
3. Դրոշմանիշային վճարների հարաբերակցություն:»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

«Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ՝

Դավիթ Տոնոյան